ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**. Արմեն Թադևոսյան, ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) միջուկային անվտանգության վարչության ռեակտորի անվտանգության բաժնի պետ – պետական տեսուչ:
2. **Գործուղման վայրը և ժամկետը**. «Ռոսատոմ Սերվիս» ընկերություն, Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2025թ. Հուլիսի 31-ից օգոստոսի 2-ը:
3. **Հրավիրող կողմը**. «Ռոսատոմ Սերվիս» ընկերություն:
4. **Գործուղման նպատակը** մասնակցել Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման (այսուհետ՝ ՇԺԵ-2) ծրագրի համատեղ համակարգող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) երրորդ նիստին:
5. **Քննարկված թեմաները**. Նիստի ընթացքում զեկուցողները ներկայացրեցին հանձնաժողովի նախորդ նիստի արձանագրությամբ սահմանված աշխատանքների կատարողականը, 2025 թվականին ՇԺԵ-2-ի ծրագրով նախատեսված աշխատանքների կարգավիճակը, 2026 թվականին ՇԺԵ-2-ի ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման ժամանակացույցը:
6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Ռուսական պատվիրակությունը գլխավորում էր «Ռոսատոմ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրենի տեղակալ - միջազգային գործունեության բլոկի տնօրեն Նիկոլայ Սպասսկին, ՀՀ պատվիրակությունը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների փոխնախարար Արմեն Սիմոնյանը: Միջոցառմանը ներկա էին նաև «Ռոստեխնադզոր»-ի ղեկավարի տեղակալ Ալեքսեյ Ֆերապոնտովը, «Ռոսատոմ Սերվիս» պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Եվգենի Սալկովը, ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի պաշտոնակատար Խաչատուր Խաչիկյանը, «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանը, ՀԱԷԿ տնօրեն Մովսես Վարդանյանը և ատոմային էներգիայի օգագործման ոլորտի այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

   Նիստի ընթացքում կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող Խաչատուր Խաչիկյանը ներկայացրեց, որ ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի՝ 2026 թվականի սեպտեմբերին գործարկման թույտվության տրամադրման պայմաններից է ՇԺԵ-1-ով նախատեսված անվտանգության համակարգերի մոդիֆիկացիաների ավարտումը, հայտնաբերված անվտանգության պակասուրդների (дефициты безопасности) վերացումը, ինչպես նաև ՀԱԷԿ-ի

2-րդ էնեգաբլոկի համակարգերի ներկայիս կոնֆիգուրացիայով մինչև 2031 թվական անվտանգ աշխատելու հիմնավորումը:

Նիստի ընթացքում ներկայացվեց նաև, որ առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի № 1597-Ա որոշման Հավելված 2-ով սահմանված ժամկետների և ՇԺԵ-2-ի ծրագրով նախատեսված՝ «Ռոսատոմ Սերվիս» ընկերության տիրույթում գտնվող աշխատանքների իրականացման համար կնքված պայմանագրերի ժամկետների միջև:

Առաջարկվեց իրականացնել ՇԺԵ-2-ի ծրագրով նախատեսված աշխատանքների գույքագրում և դրանց կատարման ժամկետների համապատասխանեցում № 1597-Ա որոշման Հավելված 2-ի ժամկետներին:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում հայկական և ռուսական պատվիրակությունների ղեկավարների կողմից ստորագրվեց արձանագրություն:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկությունները, դրանց կատարման եղանակը և պատասխանատուները ամրագրվեցին արձանագրությունում:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

06.08.2025թ. Արմեն Թադևոսյան